ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

20.12.2021թ կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/21-1» ծածկագրով պետության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան «14» փետրվար 2022թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Պատվիրատու») մի կողմից և «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Տ. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող») մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածով և 20.12.2021թ կնքված № «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/21-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5, 7.15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին

1.2 Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայությունների մատուցման նպատակով 2022 թվականի համար նախատեսված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/,

1.3 Սահմանել, որ Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 03.01.2022թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև համաձայնագիր կնքելը կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումը իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2. Այլ պայմաններ

2.1. 20.12.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/21-1» ծածկագրով պետության կարիքների համար ծառայության մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու (2) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011017523
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղար՝

_____ Լ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ
Ազատության պող., 24/1
ՀՎՀՀ՝ 00228737
ՀՀ՝ 1570069343740100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Տնօրեն՝

_____ Տ. Ավագյան
/ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված
20.12.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԷԱՃԾՁԲ-21/21-1» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
« 14 » փետրվարի 2022թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
Հ/Հ	CPV	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	722611 60/502	Էլ. մրցույթների (գնումներ և դրամաշնորհներ) և էլ. եղանակով գնումների (դրամաշ.) պլանների և պայմանագրերի հաշվառման ու գնումների(դրամաշ.) հաշվետվողականության ապահովման համակարգերի տեխ. սպասարկման և համակարգերում ֆունկցիոնալ փոփոխությունների կատարման ծառ.		24 900 000	24 900 000	49 800 000	49 800 000	49 800 000	74 700 000	74 700 000	74 700 000	99 600 000	99 600 000	99 600 000	99 600 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011017523
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղար՝

---------------------------- Վ. Հարությունյան
/ստորագրություն/ Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ
Ազատության պող., 24/1
ՀՎՀՀ՝ 00228737
ՀՀ՝ 1570069343740100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Տնօրեն՝

---------------------------- Տ. Ավագյան
/ստորագրություն/ Կ.Տ.